DOI: https://doi.org/10.52027/18294685-agh2023.sp

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱՐԻԿ
Երևան, Հայաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ ՄԱՄՈՒԼԸ . ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Հայաստանի ազգային գրադարան, ադրբեջաներեն մամուլ, Խորհրդային մամուլ, Հայաստան, Ադրբեջան, ամսագիր, թերթ։
Keywords: National Library of Armenia, Azerbaijani-language periodicals, Soviet press, Armenia, Azerbaijan, newspaper, magazine.

Սույն հոդվածում համառոտ դիտարկելու ենք Հայաստանի ազգային գրադարանում (այսուհետ՝ ՀԱԳ) պահպանվող ադրբեջանալեզու թերթերն ու ամսագրերը: Ընտրված նյութի մասին համապարփակ պատկերացում կազմելու համար փորձել ենք համառոտ անդրադարձ կատարել ադրբեջաներեն մամուլի սկզբնավորման պատմությանն ընդհանրապես՝ հատկապես ներկայացնելով Խորհրդային Հայաստանում ու Ադրբեջանում հրապարակված ադրբեջանալեզու թերթերի պատմությունը: Փորձ ենք կատարել նաև դրանք ներկայացնել աղյուսակի տեսքով՝ հնարավորինս համակարգված ներկայացնելու նպատակով: Ներկա աշխատանքը վերաբերում է ՀԱԳ-ի գրապահոցներում առկա մամուլին ու դրա պատմությանը՝ սկսած 1940-ական թվականներից 1990 թվականը ներառյալ: ՀԱԳ-ը, որպես գրատպության խոշորագույն պահոց և գրադարանագիտական, կրթական, մշակութային, տեղեկատվական կենտրոն, ստեղծում է բոլոր պայմանները տեղեկատվության հավաքագրման, մշակման և ընթերցողներին այն հնարավոր բոլոր տարբերակներով հասանելի դարձնելու համար [ՀԱԳ կայք]: ՀԱԳ-ում պահպանվում են 1940-1990 թթ. ժամանակաշրջանի ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում ու Վրաստանում հրատարակված մամուլի օրինակներ: Այստեղ առկա են «Азәрбајҹан Кәнҹләри» (Ադրբեջանի երիտասարդություն), «Азәрбајҹан Мүәллими» (Ադրբեջանի մանկավարժ), «Бакы Ахшам» (Երեկոյան Բաքու), Азәрбајҹан пионери (Ադրբեջանի պիոներ), «Sovet Ермәнистань» (Սովետական Հայաստան), «Азәрбајҹан бәдән тәрбијәчиси» (Ադրբեջանի ֆիզկուլտուրնիկ), «Бағбан» (Айгегордз, Այգեգործ), «Сосиалист Сумгајыты» (Սումգայիթի սոցիալիստ), «Шәрг Гапысы» (Արևելյան դարպասներ), «Шәргин Шәфәги» (Արևելքի լուսաբացը), «Совет Кәнди» (Խորհրդային գյուղը), «Боллуг Уғрунда» (Առատության համար, հետագայում՝ Варденис), «Варденис» (Վարդենիս), (Բարձր բերքի համար), «Ədəbijjat Qəzetəsi» (Գրական թերթ, հետագայում՝ Әдәбијјат вә Инҹәсәнәт) (Գրականություն և արվեստ), «Коммунист» (Կոմունիստ), «Данышыр Бакы» (Բաքվի զրուցակից), Әмәк (Աշխատանք), «Гафан» (Ղափան), «Јени Јол» (Նոր ուղի), «Пғндзи hамар», (Պղնձի համար), «Гукасяни Колтнтесакан» (Ղուկասյանի կոլտնտեսական), «Идман» (Սպորտ), «Достлуг» (Բարեկամություն) թերթերը: Խորհրդային Հայաստանում և Խորհրդային Ադրբեջանում հրատարակվել են հայերեն գրքեր, թերթեր, ամսագրեր, դասագրքեր և այլն: Նախքան բուն աշխատանքին անցնելը մի քանի խոսք ադրբեջանական մամուլի անցած փուլերի ու պատմության մասին:

Հայաստանում հրատարակված ադրբեջաներեն մամուլը

Ինչ վերաբերում է համատեղ գործունեությանը, ապա կարող ենք նշել այն փաստը, որ խորհրդահայ մամուլում ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքների, նրանց հուզող խնդիրների վերաբերյալ ելույթներ էին ունենում այնպիսի քաղաքական ու հասարակական գործիչներ, ինչպիսիք էին Բ. Էֆենդիևը, Ա. Շամիլովը, Ա. Քարիմովը, Ումարովը և այդ ժամանակների եղբայրական ժողովուրդների այլ ներկայացուցիչներ, ովքեր ապրում և աշխատում էին Հայաստանում: Ազգային փոքրամասնությունների մեջ խորհրդային իշխանության գաղափարների տարածման, քաղաքական կյանքի աշխուժացման, նոր կենցաղային ու հասարակա-

կան հարաբերություններին նրանց հաղորդակից դարձնելու, մի խոսքով նրանց մշակութաքաղաքական ու տնտեսական առաջընթացն ապահովելու գործում խոշոր դեր կատարեցին Հայաստանում նրանց լեզվով հրատարակվող պարբերականները: Եվ ահա 1921 թվականի կեսերից Երևանում սկսեց լույս տեսնել «Рэнчбэр» (Ռանչպար հետագայում՝ Կոմունիստ, Սովեթ Էրմանիսթանի) թերթը, որը հրատարակվում էր անկանոն պարբերականությամբ և երբեմն էլ երկարատև ընդմիջումներով՝ գրական-ժուռնալիստական ուժերի բացակայության պատճառով: 1923 թվականի ապրիլին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղարությունը քննեց Ագիտպրոպ բաժնի ադրբեջանական սեկցիան բարելավելու հարցը: Որոշվեց ենթաբաժնին կից ստեղծել հրատարակչական հանձնաժողով, որը կազմակերպելու էր տեղական նշանակություն ունեցող բրոշյուրների թարգմանության ու հրատարակչության գործը: Անհրաժեշտություն եղավ նաև վերսկսել ադրբեջաներեն «Ռանջպար» շաբաթաթերթի հրատարակումը և խնդրել՝ Անդրերկկոմին՝ Հայաստան, Կենտկոմի տրամադրության տակ գործուղել ադրբեջանցի գրողներից մեկին՝ ադրբեջաներեն հրատարակությունների գործը գլխավորելու համար: Այդ գրողը Բալա Էֆենդիևն էր, իսկ «Ռանջպար»-ը քաղաքական բնույթի գյուղացիական պարբերական էր, որ լույս տեսավ մինչև 1924 թվականի կեսերը: 1925 թվականի նոյեմբերի 29-ից սկսեց հրատարակվել «Зәнки» (Զանգու) շաբաթաթերթը, որը լույս էր տեսնում բավականին կանոնավոր պարբերականությամբ ու առաջին ամիսներին իր նախորդ՝ «Ռանջպար»-ի նման, մեծ մասամբ անվճար տարածվում էր Հայաստանում բնակվող ադրբեջանցիների շրջանում: Թերթի պատասխանատու խմբագիրը Ալեքբեր Ռիզաևն էր [Ֆելեքյան, 1970, 67-68]: Այնուհետև Հայաստանում սկսեցին լույս տեսնել ադրբեջաներեն լեզվով այնպիսի թերթեր, ինչպիսիք են «Սովեթ Էրմանիսթանի», «Բարձր Բերքի համար», «Առատության համար», «Վարդենիս», «Նոր ուղի», «Ղափան» թերթերը: Բացի Հայաստանից ադրբեջաներեն լեզվով մամուլ հրատարակվել է նաև հարևան Վրաստանի Հանրապետությունում՝ «Шәргин Шәфәги» (Շարգին Շաֆագի, Արևելքի Արշալույսը): Թերթերում պարբերաբար հրատարակվել են մշակութային, քաղաքական անցուդարձի արտաքին ու ներքին քաղաքականության, մարզական, գյուղատնտեսական, արդյունաբերական ու տնտեսական նորությունների մասին հոդվածներ: Թերթերում հիշատակության են արժանի ամսվա ու տարվա քաղաքական, մշակութային, քաղաքական ու հասարակական գործիչներին հոբելյաններին նվիրված համատեղ միջոցառումների, հայրենասիրություն, մարդասիրություն քարոզող հոդվածները: Այստեղ պարբերաբար հրատարակվել են քաղաքական, մշակութային ու հասարակական գործիչների փոխայցելությունների, հիշարժան տարեթվերի, տոնական միջոցառումներին, մասնավորապես՝ աշխատավորների, 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին նվիրված շքերթները: Թերթերում ամփոփ կերպով կարելի է հանդիպել Խորհրդային Միության հասարակական ու քաղաքական գործիչների կողմից իրականացված աշխատանքների մասին հաշվետու զեկույցները, նրանց փոխայցելությունների, հանդիպումների, ստորագրած հուշագրերի մասին ծավալուն ակնարկներ: Այստեղ կարելի է ծանոթանալ հրատարակվող գրքերի մասին ակնարկներ: Եղել են ադրբեջանալեզու այնպիսի թերթեր, որոնք համանուն էին Հայաստանում հրատարակվող թերթերի հետ: Նշված թերթերից էին «Սովեթ Էրմանիսթանը», (համապատասխանաբար Սովետական Հայաստան), «Վարդենիս» (հետագայում՝ Բարձր Բերքի համար, Կարմիր Բասարգեչար, Ստալինյան ուղի), «Բաղբան» (Այգեգործ), «Պղնձի համար» (հետագայում՝ Ղափան), «Յենի յոլ» (Նոր ուղի) և այլ թերթեր:

Ուսումնասիրված թերթերի ցանկը

հ/հ Վերնագիր	Հրատ. տարեթիվ	ՀԱԳ-ում առկա տարեթվեր	Ուղղվածություն և բնույթ	Խմբագիրներ	Հրատ. վայր
1.Боллуг Уғрунда, 1964-1973, (Առատու-	Վարդենիս 1930-1988 Բարձր բերքի համար 1957-	Վարդենիս 1973-1988 Բարձր բերքի համար 1957-	Մշակույթ, արդյունաբերություն, քաղաքականություն,	Ի. Ալիև, Մ. Ահմադով, Յ. Աբդուլաև	Բասարգեչար (Վարդենիս)

թյան համար) 1964-1972 Варденис (Վարդենի) 1930-1988 (Հետագայում՝ - Բարձր Բերքի համար 1957-1962	1962 Առատության համար 1964-1973 [Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980)	1962 Առատության համար 1964-1973	կոլտնտեսություն, մարզական, գյուղատնտեսություն		
2.Гафан Գաֆան (Կապան, հետագայում՝ Պայքար պղնձի համար 1930-1935 թթ., Պղնձի համար (1946-1979 թթ.)	Ղափան Պայքար պղնձի համար 1930-1988 Пғндзи hамар (Պղընձի համար) 1946-1979 [Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, էջ 456]	Ղափան 1979-1988 Пғндзи hамар (Պղնձի համար) 1958-1979	Մշակույթ, տնտեսություն, քաղաքականություն, կոլտնտեսություն, մարզական, հասարակություն	Է. Սարդարյան	Կապան
3.Достлуг (Բարեկամություն)	1938-1985 [Նույն տեղում, 457]	1966 – 1985	Մշակույթ, հասարակություն, տնտեսություն, քաղաքականություն, արդյունաբերություն	Ս. Ծատուրյան, Գ. Աղաբեկյան, Գ. Գուլումյան	Կրասնասելո (Ճամբարակ)
4.Јени Јол (Նոր ուղի)	1969-1988 [Նույն տեղում, 457]	1969-1988	Մշակույթ, հասարակություն, տնտեսություն, քաղաքականություն, արդյունաբերություն	Մ. Հովսեփյան	Մասիս

SUMMARY

The article presents a brief summary of the Azerbaijani-language newspaper collection preserved at the National Library of Armenia.

The history of the beginning of the Azerbaijani-language periodicals is briefly discussed in order to provide a thorough understanding of the material we chose, with a particular focus on those published in Soviet Armenia, Azerbaijan and Georgia.

We will focus on the history of Azerbaijani-language periodicals from the 1940s through 1989, which are available at the National Library of Armenia.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 470 էջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://is.gd/9yQ7sM, 29.11.2022:
2. Հայաստանի ազգային գրադարանի կայք, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://nla.am/, 29.11.2022:
3. Ֆելեքյան Հ., Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 556 էջ: